ԶԱՆԳԵԶՈՒՐ ԱՆՈՒՆԸ

Պատմական անցյալում, նախամոնղոլյան ժամանակաշրջանում այդ գավառներից Բուն Զանգեզուրը համընկնում էր Հաբանդ գավառի հետ, որին արևմուտքից սահմանակից էր Ծղուկը, այժմյան Սիսիանը, իսկ հարավից՝ Բաղքը, այժմյան Կապանը: Բաղքի արևելյան կողմը կոչվում էր Բարկուշատ-Քաշունիք[1]: Հնում Կապան (Ղափան) անունը տրվում էր հատկապես Ողջի (Օխչի) գետի և նրա վտակ Գեղվա գետի բարդ հովտին: Գեղվա գետի ձորաշատ ավազանն է, որը կրել է մասնավոր Զորք անունը[2]:

Զանգեզուր անունը համեմատաբար նոր ծագում ունի: Անշուշտ դա հայկական անվան ադրբեջանական ձևն է, որի երկրորդ բաղադրիչ վանկը համապատասխանում է հայերենի ձոր բառին և կրկնվում է օրինակ Աստազուր՝ այժմ Վանիձոր, Այնազուր՝ այժմ Աղավնաձոր և այլ անունների մեջ: Ո՞ր հայերեն բառի ձևափոխումն է առաջին զանգ արմատը: Իհարկե մի ժողովրդական ստուգաբանություն է, գիտական ոչ մի արժեք չներկայացնող այդ արմատի նույնացումը զանգ բառի հետ և այդ բառի բացատրության հետ շաղկապված են զանազան ժողովրդական և մեծ մասամբ անձնական ստեղծագործական երևակայության վրա կառուցված ավանդություններ, որոնց մեջ զանգերը խաղում են մեծ դեր[2]: Ավելի հիմնավորված է այդ անվան զուգադրությունը ոմանց կողմից՝ Ծակեձոր, մյուսների կողմից՝ Զագեձոր անունների հետ: Առաջին դեպքում[4] անունը շաղկապում են այն բանի հետ, որ Բուն Զանգեզուր գավառակի բնակչության մի մասն ապրում է ծակէրի, այսինքն քարայրերի մեջ: Գորիսից ոչ հեռու ձորակներից մեկը կոչվում է Ծակեձոր—Գորիս գետի օժանդակ Շոռ-ջուր վտակի հովիտը, հատկապես նրա այն մասը, որտեղ երկու կողմերից պատող բարձր ժայռերի մեջ փորված են բազմաթիվ քարայրեր, բառակէր:

«Այս ծակերը զանազան մեծության են և նրանցից մի քանիսը միմյանց հետ միացած են նեղ անցքերով: Ծակերից շատերը շատ բարձր են գտնվում: Քարայրներից նշանավոր է Կարմիր եկեղեցի կոչվածը, ուր մինչև այժմ էլ (1899 թ.) Կարմիր կիրակի օրը բազմաթիվ ուխտավորներ են գնում»[5]:

Հավանական է, որ սա անվան նոր մեկնաբանություն է, քանի որ Ստեփաննոս Օրբելյան պատմագրին այս անունը հայտնի չէր: Նա միշտ գործ է ածում Զագեձոր ձևը, որի ծագումը կապում է ավանդական Սիսակ նահապետից ծագող Զագի հետ, որն իբր թե Համանդ (Հաբանդ) գավառում կառուցել է Հանբաղա (Հաբանդա) բերդը «ի վերայ գետոյ միոյ» և անվանել է ձորն իր անունով Զագեձոր, բերդն էլ Զագեձորի բերդ: Այս ձորի գլխին՝ «ի գլուխ Զագե ձորոյ» մի առ ժամանակ նստել է Թաթարների՝ նետողաց ազգի զորագլուխ Բաշուն: Բացի ձորից ու բերդից Զագ անունը դրված է եղել նաև գյուղի վրա՝ Զագեձոր գյուղ, որից Տաթևի վանքը ստանալիս է եղել 12 չափ տուրք: Պարզ է, որ գյուղը համեմատաբար մեծ է եղել: Զագեձորի անունով կոչվելիս է եղել նաև այն լեռը, որի Վարարակ աղբյուրից Տաթևի Հակոբ վանահայրը ջուր է հանել վանքի դիմաց Որոտնա գետի ձախ ափին գտնվող Ցաքուտ վայրի

---

[1] Օրբելեան Ստ., *անդ*, էջ 75, 80, 86, 331 և հաջ.:

[2] Ալիշան Ղ., *Սիսական*, էջ 561: Օրբելեան Ստ., *անդ*, էջ 12, 521:

[3] Տե՛ս Հայրապետյան Եղիա, *Զանգեզուր, Գորիս*, «Գարուն» տպարան, 1910,

[4] Ширакуни Н. СМОМПК, вып. XXXIV. отд. I, էջ 182:

[5] Ալայեան Ե., *Զանգեզուր*, էջ 28—29: